Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.07.2021թ. թիվ 2113069672 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ 23.07.2021թ. թիվ 2113069690 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<11>>08 2021թ. 7-13 12098 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Մարթա Նազարյանի ՄԴ/64326-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց փողոցի 23/1 շենքի 24 բնակարանի բնակիչ Մարթա Նազարյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113069672 և 2113069690 որոշումներից մեկը՝ նշելով, որ դրանք կայացվել են միևնույն իրավախախտման համար:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները**:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն **3.1՝ <<Մուտքն արգելվում է>> ճանապարհային նշանն** արգելում է տրանսպորտային միջոցների մուտքը տվյալ ուղղությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113069672 և 2113069690 որոշումներով արձանագրված իրավախախտումների PIN անհատական ծածկագրերի տակ զետեղված տեսանյութերի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 02.07.2021թ. ժամը՝ 11:58-ին Երևան քաղաքի Դեղատան փողոցում՝ իրավախախտումն արձանագրված վայրում խախտել է **3.1՝ <<Մուտքն**

արգելվում է>> ճանապարհային նշանի պահանջը: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ վերը նշված որոշումներով միևնույն արարքի համար տեխնիկական վրիպակի արդյունքում անձը ենթարկվել վարչական պատասխանատվության կրկնակի անգամ, ուստի ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113069690 որոշումը ենթակա է բեկանման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.07.2021թ. թիվ 2113069672 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.07.2021թ. թիվ 2113069690 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Մարթա Նազարյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Ա.Գալստյան
Հեռ. 060-83-84-02